



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 210 -Ա
« 26 » ՀՈՒՆԻՍԻ 2024Թ

ԽՈՐԵՆ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով, 163-րդ հոդվածով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով Խորեն Նազարյանի դիմումը.


Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. 2024 թվականի հուլիսի 1-ից մինչև 15-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Վայոց ձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Խորեն Նազարյանին տրամադրել 2023-2024 թվականների աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 10 աշխատանքային օր տևողությամբ:

2. Խորեն Նազարյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում նրա պարտականությունների կատարումը դնել նույն կազմակերպության տնօրենի բուժական գծով տեղակալ Արմեն Հովհաննիսյանի վրա:

3. Աշխատանքի ներկայանալու ժամկետը՝ 2024 թվականի հուլիսի 16-ին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

 Recoverable Signature

X 
2024 թ. 06.26.2024 09:41:4
Հասցեագրված է հեռահաղորդակցության միջոցով



Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք. Եղեգնաձոր